



Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԾԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՐՀԻՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ*

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

Հնդկահայ գաղութի պատմության մեջ բացառիկ ու կարևոր տեղ են գրավում Կալկաթայի հայ համայնքի տարեգրությունն ու գործունեությունը:

Կալկաթան Բենգալիայի նահանգում Հնդկաստանի մեծագույն, բայց և նորագույն քաղաքներից մեկն է: Նա շուրջ 300 տարվա պատմություն ունի:

Կալկաթան հիմնադրվել է մոնղոլական տիրապետության ժամանակ, 1690-ական թվականներին, Հնդկաստանում անգլիական գաղութի նախաձեռնությամբ ռազմական և առևտրական նպատակներով և օգնությամբ ժամանակի նշանավոր հայ առևտրական ու դիվանագետ խոջա Իսրայել Սարխատի¹⁰⁰: Քաղաքը հիմնադրվել է Հուլի-Գանգեսի ափին հնդկական Սուդանատի, Կովինդքյուր և Կալիկաթ գյուղերի կողքին: Կալկաթան իր անունը ստացել է վերջին գյուղի անունից:

Կալկաթան ԺԸ դարի կեսին, 1757-ին, շնորհիվ իր նավահանգստի առավելությունների, դառնում է Բենգալիայի նահանգի առևտրական-վարչական կենտրոնը, որպես Հնդկաստանում անգլիական գաղութի ամենակարևոր հենարանը մասնավորապես անկախությունից:

* Ծարուհաված «Էջմիածին» ամսագրի 1971 թվականի №№ Ը—Թ-ից:

¹⁰⁰ Մեսրոպ Սեթյան, Հայերը Հնդկաստանում, էջ 422:

Անգլիացիներն այստեղ իրենց շահերի և իշխանության պաշտպանության համար կառուցում են մախ փլյամ բերդը, ապա Կալկաթայի միջնաբերդը:

1813 թվականին Կալկաթայում հաստատվում է անգլիական միտրոպոլիսան, որը գոյություն ունի մինչև այսօր:

1854 թվականին, Վիկտորիա թագուհու օրով, Հնդկաստանը կցվում է Մեծ Բրիտանիային, և հաստատվում է Հնդկաստանի փոխարքայությունը: Կալկաթան դառնում է պաշտոնական մայրաքաղաք: 1911 թվականին Հնդկաստանի մայրաքաղաք է դառնում Դելին, իսկ Կալկաթան համարվում է «Հնդկաստանի առաջին քաղաքը»: 1857 թվականին բացվում է Կալկաթայի համալսարանը:

Հնդկաստանը երկարամյա և համատ դարավոր ազգային-ազատագրական պայքարից հետո նվաճում էր իր ազատությունն ու անկախությունը 1950-ին:

Կալկաթան այսօր Հնդկաստանի մեծագույն և բազմամարդ քաղաքներից մեկն է, շուրջ 6 միլիոն բնակչությամբ: Քաղաքը պահել է դարձյալ իր առևտրական մեծ կարեվորությունը որպես Հնդկաստանի նշանավոր քաղաքը իր մեծությամբ, հարստությամբ, գեղեցկությամբ և հնդկական նկարագրով ու գունագեղությամբ: «Բայց ինչ որ իմ վրա հավետ ավելի տպավորիչ ներգոր-

ծություն մ'ըրալ, Կալկաթայի մեջ քան այլուր, հնդիկ տիպին առնվող ալն մասնա-
հատկությունն է որ հաճախ իրեն քաշեց
զգացումն ու միտքս:

Պենկայի մահանգը, և հատկապես Կալ-
կաթայի շրջանը, հնդկական աշխարհին այն
կետն է, որ բնիկ ցեղը, ամենն ուշ և ամե-
նեն քիչ ենթարկված ընկալով հյուսիսեն ե-
կած և բուդդայականության ճամփով արե-
վելքեն եկող օտար ազդեցություններուն,
համեմատաբար ավելի անեղծ պահած է
քար, հոս է որ ամենն ավելի կարելի է
ճանչնալ հնդիկը, իր գոյությունը՝ աշխարհի
ամենն վաղնջական, իր լեզվովը, կրոնով
ու քաղաքակրթությամբ մարդկային ամե-
նեն հետաքրքրական ազդեցություն մին, որ միշտ
ատարկա է եղած անհուն շահագրգո-
թյան... հին ցեղ մըն է ան... բայց միևնույն
ատեն և անմիջապես կզգաս թե դարերը ա-
նոր չեն տված բնալ տեսակ մը գաղափու-
թյան և պարտաւորի հյուծած երևույթը...
հինավուրց բայց ուժեղ ցեղի մը երեւոյթան
կազմը կտեսնվի արդարև իր անհատներն
ամենամեծ մասին վրա... ընդհանրապես մի-
ջահասակ, քաջալանջ, ստեպ նրբավարտ
անդամներով, շեշտված պարանոցի վրա բո-
ւորչի սիրուն գլուխ մը՝ միջին լայնությամբ
ճակատով, թուխ դեմք, սև աչքեր,... որոնք
խորության մը վրա կբացվին ու ամբողջ
անձը արտահայտությունն է խաղաղ բայց
նորոյժ հոգիի մը, որ զսպված կորովն է
ինքնին¹¹⁰:

Ահա այսպիսի արտակարգ մի երկրի և
տաղանդավոր մի ժողովրդի ծոցում է, որ
հաստատվում է ԺԷ դարում Կալկաթայի հայ
համայնքը, որի պատմությունը կազմում է
հայ գաղթօջախների տարեգրության գեղեց-
կագույն փառավոր էջերից մեկը:

Ըստ պատմական տվյալների ջողայեցի
հայերը Բենգալիայի մահանգի Սուրանատի
գյուղաքաղաքում հաստատվել են որպես
ձեռներեց առևտրականներ, մոնղոլական
տիրապետության ժամանակ, Կալկաթայի
հիմնադրությունից (1690 թվական) շուրջ
մեկ դար առաջ՝ և ավելի վաղ, քան եվրո-
պացիների մուտքը այստեղ¹¹¹:

Կալկաթայի բենգալյան ազգային հնագի-
տական թանգարանում պահվում են հայկա-
կան տապանաքարեր, որոնցից հնագույնը
կրում է 1646 թվականը:

1690 թվականին է կառուցվել Բենգալիայի
մահանգում փայտաշեն առաջին եկեղեցին

այժմյան Կալկաթայի արվարձաններից վե-
րոհիշյալ Սուրանատի գյուղաքաղաքում:

Այսօր Կալկաթայի հայոց եկեղեցու բա-
կում, որը եղել է նույնպես հնում հայկական
գերեզմանատուն, կա մի տապանաքար, որը
կրում է 1630 թվականը, հավանաբար բեր-
ված վերոհիշյալ գյուղաքաղաքից: Այդ տա-
պանաքարը համարվում է քրիստոնեական
հնագույն հուշարձանը Կալկաթայի:

1697 թվականին նշանավոր առևտրական
խոջա Իսրայել Սարհատը դիվանագիտա-
կան կարևոր առաքելությամբ մեկնում է
Դելի՝ բանակցություններ վարելու համար
մոնղոլ իշխանների հետ:

Խոջա Իսրայել Սարհատը եղել է արժա-
նավոր որդին Սուրատի նշանավոր խոջա
Փանոս Գալենտարի:

Խոջա Իսրայել Սարհատը այնուհետև
դարձյալ գլխավորում է առևտրական մի այլ
պատգամավորություն, որը 1713 թվականին
Կալկաթայի անգլիական իշխանությունների
կողմից մեկնում է Դելի՝ մոնղոլ կայսրի հետ
անձամբ բանակցելու: Մոնղոլները չէին վը-
տահում անգլիացիներին, առանց նշանավոր
ու ազդեցիկ հայ առևտրականների երաշ-
խավորության: Այդ ժամանակահատվածում
մոնղոլական արքունիքում ապրում և գոր-
ծում էր մի այլ նշանավոր հայ առևտրական
խոջա Մանուրը, որը վայելում էր նաև մոն-
ղոլ իշխողների վստահությունն ու համա-
կրթանքը¹¹²:

1756 թվականին Բենգալիայի մահմեդա-
կան իշխողները, պարտության մատնելով
անգլիացիներին, գրավում են Կալկաթան,
կողոպտում ու քանդում: Տեղի հայ առև-
տրականները կրում են նյութական մեծ կո-
րուստներ: Պլասայի ճակատամարտից հե-
տո, սակայն, 1757 թվականին, վերջնակա-
նապես վերակառուցվում է քաղաքը, և հա-
յերը, իբր փոխհատուցում իրենց նյութական
կորուստների, 70 հազար ստեղծված են ստա-
նում: Այս պարագան հաստատում է, որ ԺԷ
դարի կեսերի Կալկաթան հանդիսացել
է հայ առևտրական մեծ կենտրոն:

Կալկաթայի հայ գաղութը 1724-ին վերջ-
նականապես ստանում է իր համայնքային,
եկեղեցական-վարչական կանոնավոր կազ-
մակերպության ձևը, երբ կառուցվում է տե-
ղի հայոց ս. Հովհաննես Մկրտիչ անունով
եկեղեցին, առատաձեռն նվիրատվությամբ
ջողայեցի աղա Նազարեթի:

Այժմյան գեղեցիկ քարաշեն ս. Հովհան-
նես եկեղեցին կառուցվում է 1700 թվակա-
նից ի վեր գոյություն ունեցող Կալկաթայի
հայոց ազգային գերեզմանատանը, որ նա-

¹¹⁰ Թորգոմ արքեպ. Գուշակյան, Հնդկահայր, Ե-
րուսաղեմ, 1941, էջ 85—86:

¹¹¹ Մեարոպ Մեթյան, նույնը, էջ 419—428:

¹¹² Նույնը, էջ 421—427:

խապես հայերը ունեցել են փայտաշեն փոքրիկ մի եկեղեցի, հավանաբար ս. Աստվածածին անունով: «Տեղվույս եկեղեցին... բավական ընդարձակ, բայց համեմատորեն ցած՝ չունի գմբեթ... եկեղեցվո առաստաղը կհանգչի բարձր սյուներու վրա... բեմը բավական ընդարձակ է, խորը կկանգնի խաչկալը որ մեծավայելուչ պարզության գեղարվեստական սիրուն գործ մըն է... իսկապես խաչաձև մեծ տախտակ մըն է, որուն թագը Երրորդության պատկեր մըն է, իսկ երկու թևերուն տարածության վրա նկարված է Տերունական ընթրիքը... բոլոր պատկերներուն նկարչությունը հիանալի է արվեստի տեսակետ»¹¹³:

Տարբերելու համար, սակայն, Չիմսուրայի հայոց ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին (կառուցված 1695 թվականին) Կալկաթայի հայոց համանուն եկեղեցուց, սովորաբար Կալկաթայիցը կոչել են «Նազարեթա եկեղեցի», այսինքն, «աղա Նազարեթի բարերարությամբ կառուցված ս. Հովհաննես եկեղեցի»: Տարօրինակ թյուրիմացությամբ մը, ժամանակի ընթացքին այդ կոչումը փոխված է սուրբ Նազարեթի, որով այժմ ընդհանրապես կհորջորջվի Կալկաթայի եկեղեցին»¹¹⁴:

1734 թվականին Հազարմալ Մանվելի նվիրատվությամբ և ջուղայեցի Ղևոնդ ճարտարապետի ձեռքով կառուցվում է զանգակատան երկհարկյանի քարակերտ աշտարակը՝ եկեղեցու արևմտյան մեծ դռան արտաքին կողմում, «եկեղեցիին գրեթե կրկին բարձրությամբ, քառադեմ ահագին ժամացույցով ու քառյակ գոռ զանգակներով, որոնց բամբ ձայնը կթնդացնե շրջակա թաղերն ամբողջ, մինչև Հովկեի (Գանգես) ափերը»¹¹⁵:

1763 թվականին աղա Հարություն Պետրոսյանի ծախքով, կառուցվում են այժմյան եկեղեցու երկու կողմի ավանդատները, որոնց վրա, երկրորդ հարկում, երկու սեղաններ՝ Պողոս-Պետրոս առաքյալների և մեկն էլ ս. Գրիգոր Լուսավորչի անուններով:

1790 թվականին աղա Խաչիկ Առաքելի նվիրատվությամբ, որը եղել է «այդ ճոխ և բարերարոյ, պատուեալ յազգայնաց և յօտարաց»¹¹⁶, եկեղեցին ներքնապես «նորոգեալ պայծառամայ» և ամբողջ բակը շրջափակվում է պարսպով և կառուցվում է բահանայից մի հարկյանի տունը: Աղա Խաչիկի պատվերով 1789-ին Լոնդոնում է պատ-

րաստվում եկեղեցու զանգակատան արժեքավոր ժամացույցը¹¹⁷:

1957 թվականի նոյեմբերի 14-ին մեծ հանդիսությամբ նշվում է Կալկաթայի հայոց եկեղեցու հիմնադրության 250-ամյակը:

Վերջերս հարավային Հնդկաստանի Անդրհա Պրադեշի նահանգի Հայդարաբադ քաղաքի ծայրամասում հայտնաբերվել է 300 տարվա հնություն ունեցող հայկական մի գերեզմանատուն: «Այնտեղ կա լավ պահպանված ավելի քան 40 շիրիմ: Որոշ գերեզմանների վրա կան գրաբար տապանաքարեր: Առանձին տապանաքարեր վերաբերում են 1662 թվականին»¹¹⁸:

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԾԵՄԱՐԱՆԸ

Հնդկահայ գաղութը միշտ մտահոգվել է նոր սերնդի քրիստոնեական ու հայեցի, հայրենասիրական դաստիարակության հարցով, ինչպես նաև հայ մշակույթի, մեր հոգեվոր արժեքների պահպանման ու զարգացման շնորհակալ գործով:

Դեռևս հայկական ոչ մի գաղթօջախում հայրենասիրական, մշակութային, հրատարակչական գործը, գաղափարական, եկեղեցական-պատմագիտական տեսակետից հատուն ու արժեքավոր հրատարակություններ այնքան շատ չեն եղել, ինչպես հնդկահայ գաղութում:

Դաստիարակության, հայ դպրության և մշակույթի կարևոր ձեռնարկների հաջողության համար հնդկահայերը չեն զլացել իրենց նյութական ու բարոյական աջակցությունը:

Այս բանի պայծառ վկայությունն է դրպրոցների բացումը, տպարանների հաստատումը, եկեղեցիների կառուցումը, գաղափարախոսական, եկեղեցական-պատմական ու հայրենասիրական բովանդակալից ու արժեքավոր երկերի հրատարակությունները, առանց որոնց շատ դժվար կլինի հայապահպանման գործը օտար ափերի վրա:

Ի պատիվ հնդկահայության պետք է երախտագիտությամբ արձանագրել, որ երբ Հնդկաստանում հաստատվում էին հայկական առաջին առևտրական կենտրոնները, հայերը միաժամանակ մտածում էին ազգային հառաջդիմության ու դաստիարակության մասին, հայության պայծառ ապագայի ու բարօրության մասին:

¹¹³ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 110:

¹¹⁴ Նույնը, էջ 88:

¹¹⁵ Նույնը, էջ 90:

¹¹⁶ Հ. Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 467:

¹¹⁷ Մեարոպ Սեթյան, նույնը, էջ 448—455:

¹¹⁸ «Սովետական Հայաստան» օրաթերթ, Երևան, 1971, սեպտեմբեր 9:

Գաղթօջախներում հայ եկեղեցին համարվում էր ամուր կովանը հայապահպանման, կենտրոնը համայնքային, մշակութային-դպրոցական կյանքի: Առաջին դպրոցները բացվում էին միշտ եկեղեցու հովանու տակ, նրա շրջափակում և նույնիսկ եկեղեցու մեջ: Եկեղեցին ու դպրոցը կոչվել էին հայրենիքից հետո ապրող հայության բեկորների մեջ արթնացնելու և խրախուսելու ազգային-հայրենասիրական արժանապատվության գիտակցություն, վստահություն սեփական ուժերի վրա:

Այս տեսակետից Կալկաթայի հայ համայնքը հնդկահայ գաղթօջախի պատմության մեջ կատարել է վճռական, մնացում փառավոր գործունեություն մինչև այսօր, իր եկեղեցիով, ազգային կրթական հաստատություններով և մանավանդ Մարդասիրական ճեմարանով, որի գոյության և գործունեության 150-ամյակն է նշվում այս օրերին ամենօրեք, հայրապետական սրբատառ կոնդակով:

1690—1790 թվականներին, ամբողջ մի դարի տևողության ընթացքում, Կալկաթայի «հայ գաղութը իր գոյության նյութական ու բարոյական հիմքերը կամրապնդե առևտրական գործունեության փայլուն հաջողություններով և եկեղեցական կազմակերպության բարգավաճ արդյունքներով: Փորձառու և փարթամ վաճառականներ, որոնք Սուրատի և Սաիդաբադի մեջ մանավանդ իրենց դիրքը շինած էին, հետզհետե կուգան հաստատվի Կալկաթա, իրենց հետ հոն փոխադրելով նաև հայ գաղութին տնտեսական և ազգային կյանքի կենտրոնը:

Արթուն ժողովուրդի մը, որպիսին է ի բնե ջողայեցիին, կյանքին մեջ երբ անգամ մը կգոյացվին հառաջդիմության այդ երկու ազդակները՝ հարստությունը և ազգային գիտակցությունը, չուշանար նաև կրթական խմորումը, իմացական կյանքը...

Հնդկահայը, ինչպես Մադրասի մեջ, նույնպես և հոս, Կալկաթայի մեջ, կրցավ ... իր կրթական կյանքին տալ իմացական շարժումի այն շունչը, որ պահանջն էր որքան իր արյան բնագոյին, նույնքան նաև իր տեղական պետքի, կրթված ժողովուրդի մը հետ արժանապատ և հաջողությամբ գործակցիլ կարենալու հարկին»¹¹⁹:

Կալկաթայում առաջին մարդը, որը զբաղվել է հնդկահայ նոր սերնդի դաստիարակության հարցով, դա ջողայեցի Մարգար Հովհաննես Գալենտար (յանն) էր, մի բարձրաստիճան գիմկորական կամ կոմանդանտ, որը Կալկաթայի իր տանը բացել էր

«առանձին դպրատուն մը իր ազգին տղաներուն համար»¹²⁰: Կոմանդանտ Մարգարը եղել է Գորկի խանի ձեռքի տակ գործող հայ գեներալներից մեկը¹²¹:

Բայց Կալկաթայում հայագիր առաջին հայ դպրոցի բացումը կապվում է 1798 թվականին, ծնունդով թոքատեցի կամ եվրոպիացի, հնդկահայ և կալկաթաբնակ Հարություն Գալստյանի անվան հետ, «որ քսան և հինգ տարիներ, քառորդ դար մը ամբողջ, շարունակեց հոն մասնավոր ուսումնարան մը»¹²²:

Հարություն Գալստյանը, կալկաթահայության այս Գամաղիելը, արդարև 25 տարիներ շարունակ իրեն նվիրում է, առանց մնացորդի, կալկաթահայ նոր սերնդի դաստիարակության գործին, հասցնում բազում աշակերտներ՝ նրանց ներշնչելով հայոց լեզվի և դպրության սերն ու պաշտամունքը և ընդհանրապես հայ ժողովրդի մտավոր, բարոյական ու հայրենասիրական դաստիարակության անհրաժեշտության պայծառ տեսլականը¹²³:

Հարություն Գալստյանի այս տնային դըպրոցը, «առ ոտս աշակերտութեամբ», չի բավարարում, սակայն, ժամանակի դաստիարակության և հառաջդիմության պահանջները:

Եվ ահա Հարություն Գալստյանի նախաձեռնությամբ, նրա ջանքերով և առաջարկով Կալկաթայի հայ համայնքը նախաձեռնում է երկրորդական մի հայ վարժարանի հաստատման և նոր շենքի կառուցման աշխատանքներին՝ ամուր և ապահով հիմքերի վրա դնելու համար հոգևոր, ազգային, հայրենասիրական դաստիարակության, կրթության գործը:

«Հնդկահայոց կրթական վերածննդյան գաղափարին բուն երկնողի մը փառքը վերապահված էր Աստվածատուր Մուրադխանյան ջողայեցիին: Այս անձն էր որ 1797 հուլիս 30-ին ազնվական մտածումը կունենա ազգին կտակելու գումար մը, 8000 ռուպի, Հնդկաստանի հայության համար ազգային կրթարան մը բանալու նպատակով»¹²⁴:

Բարերարի՝ կրթանվեր Աստվածատուր Մուրադխանյանի մահով, սակայն, 1799,

¹²⁰ Նույնը, էջ 91:

¹²¹ Թովմաս Խոջամալյան, Պատմություն հնդկաց, մասն Գ, Կալկաթա, 1849: Տե՛ս նաև Մեսրոպ Սեթյան, նույնը, էջ 488, 481:

¹²² Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 91:

¹²³ Մեսրոպ Սեթյան, նույնը, էջ 481:

¹²⁴ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 91: Տե՛ս նաև Մեսրոպ Սեթյան, նույնը, էջ 482:

¹¹⁹ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 90—91:

սեպտեմբերի 28-ին մի որոշ ժամանակ անկատար է մնում նրա իղձը: Կտակված գումարն էլ բավարար չէր մնա՝ կրթական մի մեծ ձեռնարկի հաջողության համար:

1816 թվականին հնդկահայ մի այլ բարերար, Սահյաբադում բնակվող ջողայեցի կրթասեր մի հայ վաճառական՝ Մնացական Մմբատ Վարդանյանը, որը ծնվել էր 1772-ին Նոր Զողայում, «քաջությունը կունենա մոռացված՝ գրեթե մեռած նպատակ մը կենդանացնելու աշխատանքին լծվելու»¹²⁵:

Մնացական Վարդանյանը, որպես բանիմաց և գործնական մտքի տեր մարդ, 1816 թվականին «Հրապարակ» տիտղոսված մի ջերմ կոչով դիմում է հնդկահայությանը, որ հարգեն հիշատակը Մուրադխանյանի և նոր նվիրատվություններով վերանորոգեն նրա կրթանվեր կտակը: Մնացական Վարդանյանի կոչը անարձագանք չի մնում: Ստեղծվում է Կալկաթայում մի հանձնաժողով, որը և ձեռնամուխ է լինում հանգանակության՝ ի նպաստ նոր դպրոցի կառուցման: Մեարոպ Սեթյանն իր պատմության մեջ, արխիվային փաստաթղթերի հիման վրա, ներկայացրել է մինչև 1850 թվականը Մարդասիրական ճեմարանի օգտին կատարված նվիրատվությունների ցանկը, որ հսկայական չափերի է հասնում նվիրատվությունների քանակը¹²⁶:

Եվ ահա 1821 թվականի ապրիլի 2-ին, ջողայեցիներին հատուկ Ազարիայի տոմարով, Նոր տարվա օրը, Ծննդ ամսի 1-ին (որը համապատասխանում է ապրիլի 2-ին) մեծ հանդիսությամբ ու խանդավառ մթնոլորտում բացվում է Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանը, հին չինական շուկայի փողոցում, հայոց եկեղեցու անմիջական հարևանությամբ:

1825 թվականին Հարություն Գալստյանի «առտին» դպրոցը ևս միացվում է նորաբաց Մարդասիրական ճեմարանին՝ Կալկաթայի համայնքային խորհրդի ցանկությամբ և որոշումով:

Հարություն Գալստյանը մեծ սիրով և նրվիրումով իր տեսչական ու ուսուցչական պաշտոնը շարունակում է Մարդասիրական ճեմարանում, որպես հմուտ և անձնվեր մանկավարժ՝ այստեղ ևս հասցնելով բազում աշակերտներ և արդարորեն արժանանալով հնդկահայ սերունդների երախտագիտությանը: Հարություն Գալստյանի աշակերտներից են Հով. Ավդալյանը, Մկրտիչ Էմինը, Թադեոս Խաչիկ Ավետումյանը, Հարություն Թադեոս Օռեմը և ուրիշներ¹²⁷:

Հարություն Գալստյանը վախճանվում է 1833 թվականի նոյեմբերի 10-ին, 56 տարեկան հասակում և թաղվում Կալկաթայի հայոց եկեղեցու բակում: Նա ժառանգ չի թողնում: Լինելով հայրենասեր ու ժողովրդանվեր մարդ, իր ողջ նյութական հարստությունը կտակում է ազգին. 10000 ռուսի նվիրում է բարեհրապարակ նպատակներով Կալկաթայի հայոց եկեղեցուն և նորաբաց Մարդասիրական ճեմարանին: Նվիրատվություններ է կատարում նաև Ծիրագի և հաղորդի եկեղեցիներին:

Կալկաթայի հայոց եկեղեցու արևմտյան արտաքին պատի վրա կա սև մարմարյա մի տախտակ՝ նվիրված Հարություն Գալստյանի հիշատակին¹²⁸:

Կալկաթայի Մարդասիրական ճեմարանը եղել է գիշերօթիկ դպրոց, որի հյուրընկալ հարկի տակ ապաստարան են գտել և կրթություն ստացել հազարավոր հայ երիտասարդներ, որոնք ընդհանրապես զայիս էին Նոր Զողայից, Սպահանից և Իրաքից¹²⁹:

1846 թվականին ճեմարանի վարչությունը, հարգելով «սուրբ հիշատակը» և հավերժացնելու համար «անունն ու առաքնությունը» նրա երկու հայրենասեր և կրթանվեր բարերարների՝ Աստվածատուր Մուրադխանյանի և Մնացական Վարդանյանի, ճեմարանի մեջ նրանց հիշատակին կանգնեցնում է մարմարյա հիշատակարան:

Ճեմարանի առաջին բարերար Աստվածատուր Մուրադխանյանը մահացել է ու թաղվել Կալկաթայում 1799 թվականին: Մնացական Վարդանյանը մահացել է ու թաղվել Սահյաբադում 1827 թվականի հոկտեմբերի 14-ին:

Մարդասիրական ճեմարանի գոյության և ապահովության համար նվիրատվություններ են կատարվում ոչ միայն հնդկահայ գաղութի ծոցում, այլ նաև Ռանգուն, Մանդրե, Սեմիո, Սինգապուր, Պենանգ, Ծալա, Սումատրա և այլ քաղաքներում:

Մարդասիրական հայոց դպրոցի ապահովության համար խոշա Գևորգ Մանուկի կատարած մեծ կտակը, շուրջ 30000 ռուսի, փոխադրվում է Կալկաթա, որ մասնավոր աշակերտներ են պահվում Մարդասիրական ճեմարանում այդ կտակի հաշվին, «Մարդասիր դպրոց» անվան տակ:

Հնդկահայ այլ համայնքներում առիայացած եկեղեցիների եկամուտները, ազգային կալվածների վարձքերը, նվիրատվությունների մայր գումարի տոկոսները հատկացվում են Մարդասիրական ճեմարանին, որով նյու-

¹²⁵ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 91:

¹²⁶ Մեարոպ Սեթյան, նույնը, էջ 484—487:

¹²⁷ Նույնը, էջ 489—491:

¹²⁸ Նույնը, էջ 482—483:

¹²⁹ Նույնը, էջ 487:

թապառախ ապահովվում է նրա կյանքն ու գործունեությունը մինչև մեր օրերը:

Մարդասիրական ճեմարանը իր հիմնադրության օրից ունենում է նաև աղքատների օգնություն, որը փակվում է 1842 թվականին:

1846 թվականին Մարդասիրական ճեմարանի ուսուցիչ, անվանի մատենագիր և մեծահմուտ մանկավարժ Մեսրոպ Թադևոսյանը բացում է Սանդիստյան վարժարանը, «որ հայ մանչև աղջիկ մանուկներ կստանան ազգային կրթություն ուսում: Այս դպրոցը իր գոյությունը կշարունակե մինչև վեց տարիներ»¹³⁰:

ԺԹ դարի առաջին քառորդում է, որ և՛ մայր հայրենիքում, և՛ հայկական գաղթօջախներում սկսվում է կրոնական-ուսումնական և կրթական-լուսավորական բեղում գործունեություն: «1815 թվականին Մոսկվայում արդեն գործում էր նոր ժամանակների հայկական բարձրագույն ուսումնական առաջին հաստատությունը՝ Լազարյան ճեմարանը»¹³¹:

1816 թվականին հայրենասեր ու լուսամիտ Ներսես Աշտարակեցին բացում էր Թիֆլիսում Ներսիսյան հոգևոր վարժարանը, որը 1824 թվականին տեղափոխվում էր նրա կառուցած նոր դպրոցական շենքը:

1838 թվականին Կ. Պոլսում, Սկյուդար թաղամասում, բացվում էր «ճեմարանս ս. Երուսաղեմի» գիշերօթիկ վարժարանը, «ժամանակի բարձրագույն ուսումնարանը, ուր մեծ տեղ էր հատկացվում հուսանիտար և ճշգրիտ գիտություններին»¹³²:

1834 թվականին բացվում էր Պադուայում Մուրադյան և 1836 թվականին Վենետիկում Ռաֆայելյան վարժարանները:

Դպրոցաշինության այս նվիրական գործում մեծ էր և երախտագիտության արժանի մանավանդ ջուղայեցիների և հնդկահայերի կատարած կրթանվեր գործունեությունը, որը «արգասիքն էր հնդկահայերու և ջուղայեցիներու բարեգործության, անոնց կրթանվեր եռանդի և հույսերու հոսանքին, որ ստեղծած էին ամեն կողմ: Ու ջուղայեցի մատաղ սերունդը, իր ծննդավայրին մեջ, ուսումնական որևէ ապագայի մը երաշխիքն գուրկ, ակնկալուող կմնար արտասահմանի այս կրթարաններում, որոնց մեջ իրեն համար ամենեն հրապուրիչն ու մանավանդ մատչելին կթվեր Կալկաթայի ճեմարանը»¹³³:

Կալկաթայի Մարդասիրական ճեմարանը իր բացման առաջին իսկ օրից ունեցել է պատրաստված, գիտակից, հայրենասեր և նվիրված դասախոսական կազմ: Հարություն Գալստյանից հետո հիշատակվում են պաշտոնապետ անունները Հովհաննես Հարությունյանի, Իսահակ Ազնավուրյանի, Մարտիրոս Մկրտիչ Դավթյանի, Մեսրոպ Թադևոսյանի, Հովհաննես Ավդալյանի, Դավիթ Ֆրիդոն Մելիք-Բեգարյանի, Մկրտիչ Աղաբեկյանի, Հարություն Ասատուրյանի, Թադևոս Տեր-Ստեփանյանի, Գևորգ Վրդ. Թուրյանի¹³⁴ և ուրիշների, որոնք իրենց մանկավարժական հարուստ փորձով և հմտությամբ դասախոսություններով փառավորում են անունը Մարդասիրական ճեմարանի:

Մեսրոպ Սեթը իր վերոհիշյալ պատմության մեջ մեծ հիացմունքով և երախտագիտությամբ է խոսում մանավանդ Հովհաննես Ավդալյանի, Մեսրոպ Թադևոսյանի և Թադևոս Տեր-Ստեփանյանի մանկավարժական գործունեության մասին¹³⁵:

Ճեմարանն իր ոսկեդարն ապրում է Թադևոս Տեր-Ստեփանյանի տեսչության 20 տարիներին (1863—1883): Հովհաննես Ավդալյանի մահից հետո, նրա մանկավարժական վերարկուն՝ «գմաշտեակն Եղիայի» (ԴԹԱԳ. Բ 13—14) ընկնում է արժանավորապես Թադևոս Տեր-Ստեփանյանի ուսերին: «Թադևոս Տեր-Ստեփանյանը պահում է իր ուսուցչապետության տարիներին հայ դասական լեզվի բոցավառ ջահը ճեմարանում և անընդմեջ 20 տարիներ ազգային կրթական այս հաստատությունը հասցնում է իր փառքի գագաթնակետին և այն դարձնում լույսի վառարան և ինչպես նաև Հնդկաստանում և Արևելքում հայագիտության և հայ մշակույթի կենտրոն»¹³⁶: Թադևոս Տեր-Ստեփանյանը հասցրել է բազում աշակերտներ, որոնց մեջ՝ անվանի և հայրենասեր առևտրականներ, մտավորականներ:

Մարդասիրական ճեմարանի անվանի աշակերտների մեջ հաշվում են Մկրտիչ Էմինը, Թադևոս Խաչիկ Ավետույանը, Ավետուս Թադևոս Օռնան, Խաչիկ Աբրահամ Թովմասյանը, Թովմաս Մալկունը, Մեսրոպ Սեթը և ուրիշներ¹³⁷:

1883 թվականին կառուցվում է ճեմարանի նոր շենքը Ֆրի Սկոլ Ստրիտում՝ բավարարելու համար պահանջը տարեց տարի աճելացող ուսանողության: Ճեմարանի նոր շենքը օծվում է տիպար դպրոցի հատուկ

¹³⁰ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 92:

¹³¹ Հայկ Դավթյան, Հայ գիրքը 1801—1850 թվականներին, էջ VI—VII:

¹³² Նույնը, էջ VII:

¹³³ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 88:

¹³⁴ Նույնը, էջ 91:

¹³⁵ Մեսրոպ Սեթյան, նույնը, էջ 487—489:

¹³⁶ Նույնը, էջ 491:

¹³⁷ Նույնը, էջ 489—491:

կենցաղային բոլոր հարմարություններով:

Նույն թվականից, սակայն, դժբախտաբար Մարդասիրական ճեմարանը չի կարողանում պահել իր երբեմնի հմայքն ու անունը: Վաստակավոր տեսուչ Թադեոս Տեր-Ստեփանյանը հեռանում է ճեմարանից՝ ընդհարվելով խնամակալության որոշ անդամների հետ: Ճեմարանը թատերաբեմ է հանդիսանում Կ. Պոլսից եկած ոմն Կարապետ Պետրոս Մուրադյանի տեսչության օրով շահասկությունների և անկարգությունների: Մեարույ Սեթը շատ վատ գույներով է ներկայացնում Կարապետ Մուրադյանին, որպես կեղծ մանկավարժի և խաբեբայի. «փառքը հեռացավ ճեմարանից», գրում է նա խորը վշտով¹³⁸: Ճեմարանը իր նախկին փայլուն օրերին է վերադառնում 1892—1895 թվականներին, երբ տեսուչ է նշանակվում Թեոդորոս Իսահակյան ջողայեցին, անգլիագետ, աստվածաբան, քահանա և ապա վարդապետ: Այնուհետև ճեմարանի տեսչությունը ստանձնում է դարձյալ 1895—1904 թվականներին Թադեոս Տեր-Ստեփանյանը: 1904—1919 թվականներին ճեմարանի ղեկավարությունը հանձնվում է Թադեոս Տեր-Ստեփանյանի աշակերտ Վ. Մ. Գալստյանին¹³⁹:

1828 թվականից սկսած ճեմարանը ունենում է իր գրադարանը, «Արարատյան գրադարան» անունով: Գրադարանը ունեցել է իր տպագրված կանոնադրությունը, գրքային ֆոնդից օգտվելու կարգը: Գրադարանն ունեցել է հայերեն, անգլերեն, լատիներեն, ֆրանսերեն, ֆրանսերեն, հոլանդերեն, պարսկերեն, հնդկերեն, չինարեն լեզուներով հարուստ և արժեքավոր գրքային ֆոնդ, ինչպես նաև արժեքավոր և հազվագյուտ ձեռագրական ֆոնդ, որոնք, սակայն, դժբախտաբար բաժին են դարձել անխիղճ մարդկանց հափշտակությանց: Մեարույ Սեթը դառնություն է արդար գալույթով է խոսում 1883—1893 թվականներին ճեմարանի գրքային ֆոնդից հափշտակված գանձերի ն, մանավանդ, ընտիր ձեռագրերի մասին¹⁴⁰:

1904 թվականին կառուցվել է ճեմարանի նոր գրադարանային շենքը և վերակազմվել է նրա գրքային ֆոնդը, ոչ այնքան հարուստ և հմատիպ, որքան էր հինը:

1921 թվականի ապրիլին մեծ հանդիսավորությամբ նշվում է ճեմարանի հիմնադրության 100-ամյակը, մեծ նվիրատվություններ են լինում հնդկահայ համայնքի կողմից ճեմարանի նյութական ապահովության և գոյության համար: Այս առթիվ ճեմարանի

նախկին սաներից և բարեկամներից կազմվում է **Կալկաթայի հայոց Մարդասիրական կոլեջի հարյուրամյակի հիմնադրամ**:

1920-ական թվականներից հետո, նշում է Մեարույ Սեթը, ճեմարանը մի կերպ պահում է իր գոյությունը, ստավել կամ նվազ արդյունավորությամբ: Պակասել է ուսանողության թիվը, և ճեմարանը միշտ կարիք է ունեցել որակյալ և իրենց ուսուցչական կոչման բարձրության վրա գտնվող դասախոսական կազմի:

Այժմ ճեմարանի տեսուչն է Վահան Փռլադյանը, որը երկար տարիներ վարում է այդ պատասխանատու պաշտոնը:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ

1963 թվականի նոյեմբերին, երբ Հայոց Հայրապետը հարավային Հնդկաստան՝ Բեռլա-Գոչին էր գտնվում՝ եղբայրական հրավերովը Հնդկաստանի և Արևելքի մալաբար թույր եկեղեցու պետ Տ. Բասիլիոս Բ Գեարգեսե կաթողիկոսի, նախապես այցելում էր Բոմբեյի, Մադրասի հայ եկեղեցիներն ու փոքրաթիվ համայնքները և ապա ղեկտեմբերի 3-ին հովվապետական այցելությամբ մխիթարում և խանդավառում Կալկաթայի հայ համայնքը: Վեհափառ Հայրապետը Կալկաթայի հայության մեծարելի և թանկագին հյուրն էր լինում ղեկտեմբերի 3—17 օրերին: Հայոց Հայրապետի՝ Հնդկաստան այցելության ժամանակ Նրա ջբախմբի մեջ էին Երուսաղեմի հայոց տ. Նիկիե պատրիարք Տերտերյանը, Վրաստանի հայոց առաջնորդ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը, տ. Արսեն վրդ. Բերբերյանը՝ որպես գավազանակիր, և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը:

Պատմության մեջ առաջին անգամ էր որ Ամենայն Հայոց Հայրապետը ոտք էր դնում հնդկաց աշխարհի հյուրընկալ հողի վրա՝ արժանանալով նաև պետական բարձրագույն ուշադրության և հարգանքի:

Հայոց Հայրապետը, որպես գերագույն պետը Հայաստանյայց առաքելական եկեղեցու, հանուն Իր և ս. Էջմիածնի, պաշտոնական այցելություն էր տալիս Դելիում նոյեմբերի 15-ին Հնդկաստանի հանրապետության նախագահ դոկտ. Ռադհակրիշնային, նոյեմբերի 17-ին՝ Հնդկաստանի վարչապետ Զավահաուլա Ներուին, ներքին գործոց նախարար Նանդալին և ապա Հնդկաստանի փոխ-նախագահ դոկտ. Զաքիր Հյուսեյնին՝ ամեն տեղ արժանանալով բացառիկ պատիվների և ջերմ, սիրալիք ընդունելության:

Հնդկաստանում գտնված օրերին Հայոց Հայրապետը պաշտոնական այցելություններ

¹³⁸ Նույնը, էջ 492—495:

¹³⁹ Նույնը, էջ 489—502:

¹⁴⁰ Նույնը, էջ 500—502:

էր տալիս նաև քույր եկեղեցիների և այլ կրոնական հասանքների հոգևոր պետերին: Դեկտեմբերի 8—17 օրերը պատմական անմոռանալի օրեր եղան Կալկաթայի հայ ողջ հասանքի համար՝ շնորհաբեր այցելությանը և ներկայությանը Հայոց Հայրապետի:

Դեկտեմբերի 7-ին Հայոց Հայրապետը և Եղիշե պատրիարքի և Իր շքախմբի անդամների ընկերակցությամբ այցելում է Կալկաթայի հայերի կրթական գույգ օջախները՝ Դավթյան օրիորդաց վարժարանը, որը հիմնվել է 1924 թվականին Դավիթ Դավթյանի կտակով, և Մարդասիրական ճեմարանը: Մանկապարտեզի սրահում ուսուցչական կազմը, աշակերտներն ու աշակերտուհիները հոգաբարձության անդամները շերտերն ողջունում են Հայոց Հայրապետի ժամանումը:

Հայոց Հայրապետը հանգամանորեն ծանոթանում է Դավթյան վարժարանի և Մարդասիրական ճեմարանի ուսումնական ծրագրին, այցելում բոլոր հարկաբաժինները, դասարանները, ցուցարանները, գրադարանը, լաբորատորիան, լոգարանը, ընդունելությանը սրահը և Իր «Դահլիճ»-ով օրինում կրթական այս գույգ հարկերի տակ կատարված դաստիարակչական գործը՝ շերտորեն զննատեսելով ուսուցչական կազմի կատարած շնորհակալ աշխատանքը:

Վեհափառ Հայրապետի այցելության ժամանակ, 1963 թվականի դեկտեմբերի 7-ին, Մարդասիրական ճեմարանը, Դավթյան աղջկանց վարժարանն ու մանկապարտեզը ունեին 140 աշակերտ 9 դասարաններում, որոնցից 97-ը տղա և 43-ը՝ աղջիկ: Աշակերտության հիմնական կորիզը բաղկանում էր Իրանից, Իրաքից և Կիպրոսից եկած ուսանողներից:

Մարդասիրական ճեմարանի և Դավթյան աղջկանց վարժարանի աշակերտ-աշակերտուհիները միասին են սովորում:

Դեկտեմբերի 8-ին Վեհափառ Հայրապետը և պատարագի մատուցմամբ և հոգեշունչ, հայրենասիրական Իր քարոզով մխիթարում և խանդավառում է Իր հավատավոր զավակներին:

Դեկտեմբերի 9-ին, երեկոյան ժամը 16-ին, Վեհափառ Հայրապետը հանդիսավոր իրադրության մեջ Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի բակում, ազատ հողամասի վրա, կատարում է ճեմարանի նոր շենքի հիմնարկերի օրհնությունը՝ ի ներկայության տ. Եղիշե պատրիարքի, Իր շքախմբի անդամների, Կալկաթայի քաղաքապետի, լուսավորության նախարարի, օտար դպրոցների տեսուչների և հայ ու օտար այլ պաշտոնական անձնավորությունների:

Ճեմարանի նոր շենքի օրհնությունից հետո տ. Եղիշե պատրիարքը, խուսք առնելով, հանուն Վեհափառ Հայրապետի, շեշտում է այն սրտատույզ ազգային ոգու ներգործությունը, ըստ որի հայ ժողովուրդն ուր էլ որ նեղված լինի բախտի քմահաճությունից, իր նվիրական պարտքն է համարել իր գոյատևման համար նախ մի սուրբ խորան բարձրացնել և հաճախ հավատքի այդ նույն խորանն էլ դարձնել դպրոցական բնավայր և գիտություն ջամբելու հայ նոր սերունդներին:

Նույն օրը, ալելի ուշ, ժամը 18-ին, Մարդասիրական ճեմարանի հանդիսատեսում Հայոց Հայրապետի բարձր պատվին կազմակերպվում է գրական-գեղարվեստական երեկոյի, որի ընթացքում հայրենաշունչ մեծ ճառով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը՝ խոսելով նաև ս. Էջմիածնի հոգևոր վերազարթոնքի և մայր հայրենիքում մեր վերածնված ժողովրդի կատարած հայրենաշեն աշխատանքների մասին, կոչ անելով, որ Հնդկաստանի այս հեռավոր ու հյուրընկալ ափերի վրա ապրող հայությունը ինչպես անցյալում, այսօր էլ հավատարիմ մնա իր ազգային-հայրենասիրական, մշակութային-համամարդկային ավանդություններին և իդեալներին, հայոց պատմության ոգուն և վերածնված Մայր Հայաստանին:

Առաջին անգամ էր, որ Ամենայն Հայոց Հայրապետը անձամբ ս. Էջմիածնի օրհնություններն ու վերածնված մայր հայրենիքի ողջույններն էր տանում Հնդկաստանի հյուրընկալ հողի վրա ապրող հայ ժողովրդի զավակներին, որոնք շուրջ 400 տարի հաստատվել էին այդ հեռավոր երկրի տակ, ապրել ս. Էջմիածնի օրհնության ներքո, հայրենյաց սիրով, կառուցել փառավոր եկեղեցիներ՝ որպես վկայությունը հայ անմեղ հավատքի, կանգնեցրել պատմական հուշարձաններ, բացել տպարան, հիմնել կրթական օջախներ, ապրել ու գոյատևել հայ ժողովրդի հավաքական կյանքով, նրա հայրենասիրական-ազգային մտորումներով, լուսաբաղձ իդեալներով:

«Վստահ եմք, — հաստատել է Հայոց Հայրապետը Հնդկաստան ուղևորությունից վերադարձին, դեկտեմբեր 28 թվակիր Իր ուղիւն-գրույցում, — թե ս. Էջմիածնին Մեր տարած օրհնությունը և վերածնած մայր հայրենիքի կենդանի իրականությունն ու ծաղկումը, հոգեկան ամուր պատվանդաններ և կյանքի աղբյուրներ կհանդիսանան հնդկահայ պատվական ժողովուրդի համար»¹⁴¹:

¹⁴¹ «Էջմիածին» ամսագիր, Էջմիածին, 1964, №№ 8—9, էջ 113—161:

ԿԱԼԿԱԹԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ ԵՎ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կալկաթայի հայ համայնքի ծոցում, կրթական գործի հետ զուգընթացաբար, սկիզբ է առել հայ տպագրությունը՝ «հասարակական կյանքի բուն վարիչ ուժը» մասնովը: 1796-ին, այսինքն Մուրադխանյանի կտակեն տարի մը առաջ, Հովսեփ քահանա Ստեփանյանը, եկեղեցւոյ բակին մէջ կազմած փոքրիկ տպարանէ մը կհրատարակէ Աբրահամ կաթողիկոս Կրետացիի «Պատմութիւն Նատր-Շահ-ին գործը»¹⁴²:

Նույն տպարանից լույս է ընծայվում 1797 թվականին Հովհաննէս ջուղայեցի Մարուզ վարդապետի «Գիրք պատմութեան... վիճաբանութիւն առ Շահն Սէմանն պարսից»¹⁴³:

Ջուղայեցի Հովհաննէս Մարուզ վարդապետի սույն աշխատությունը իր տեսակի մէջ եզակի և կարևոր մի երկասիրություն է՝ ի պաշտպանություն քրիստոնէական կրոնի և հայ եկեղեցւոյ դավանության:

Ջուղայեցի ժամանակի նշանավոր ու գիտնական մատենագիր-վարդապետներից մեկը, հմուտ և քաջաճանոթ պարսկերէն և արաբերէն լեզուների, Սպահանում հրապարակային վիճաբանություններ է ունեցել Շահն Սյուլեյմանի և մահմեդական շեյխերի հետ, որոնք ստիպում էին պարսկահայերին ընդունել մահմեդականությունը: Հովհաննէս Մարուզ վարդապետը իր կոտ տրամաբանությամբ, խորը գիտելիքներով և սրբակրոն կենցաղով կարողանում է ապացուցել քրիստոնէական կրոնի մարդկայնությունն ու ազատել իր հայրենակիցներին դավանափոխությունից:

Կալկաթայում, Ստեփանյան քահանայի տպարանում, լույս է տեսնում նաև «Գրգուկ որ կոչի էֆիմէրտէ», 488 էջ¹⁴⁴:

1811 թվականին Կալկաթայում բացվում է Ավետ Զնթովյանի տպարանը, ուր հրատարակվում է առաջինը «Նոր տետրակ այբուբենական»: Այս տպարանից լույս են տեսնում շուրջ 22 աշխատություններ¹⁴⁵, որոնցից են՝ Զենոբ Գլակ, Յովհանն Մամիկոնեան՝ «Պատմութիւն Տարօնոյ», «Պարտէզ հոգևոր», Եղիշէ՝ «Գիրք որ կոչի Եղիշէ պատմագիրք», «Աստուածաշունչ... գիրք Հնոց և Նորոց Կտակարանաց... ի Կալկաթայ, ի գիղաքաղաքն Սիրամիոր»... 1807

էջ. «Գիրք դաւանութեան առ ամենատարբերորդութիւն», 277 էջ. Յակոբ Կարնեցի՝ «Մեկնութիւն երգ երգոց անուանեալ Բանիցն Սաղոմօնի»... 377 էջ. «Ժամագիրք համառօտ վասն մանկանց». «Տետրակ որ կոչի ծաղկաքաղ». (սա մի «տարեցոյց է» ի ծամանակագրական, աշխարհագրական, տիեզերագրական, տոնախոսական, ծիսական, օրացուցային գիտելիքներով և Կալկաթայի հայոց մասին վիճակագրական ծանոթություններով)¹⁴⁶. «Գիրք պատմութեան որ կոչի Պղնձէ քաղաք». «Գիրք սաղմոսաց Դաւթի, հոմերական ոտիք», 375 էջ, «Տաղաչափյալ բանահյուսություն մըն է, հանգավոր, գրաբար, հարթ և պարզ լեզվով և՛ սահուն քերթությամբ, և որ իբրև աստվածաշնչական գրականության սեռ, առաջին նմուշն է իր տեսակին մէջ»¹⁴⁷:

Ավետ Զնթովյանի տպարանը գործում է շուրջ մեկ տասնամյակ. հրատարակչական այս ձեռնարկները ավելի անհատական նախաձեռնությունների արդյունք էին, քան ծրագրված, կազմակերպված մի գործունեություն:

Կալկաթայում 1821 թվականից գործում է Պողոս Հորդանանյանի տպարանը, «Իմաստախնդրական միաբանութիւն» անունը կրող հրատարակչական մի մարմնի օժանդակությամբ և գլխավորությամբ: Այս տպարանը ևս ունենում է դժբախտաբար կարճ տևողություն: Այս տպարանից 1821-ին լույս են տեսնում չորս աշխատություններ միայն, Հովհաննէս Ավդալյանի՝ Մարդասիրական ճեմարանի մեծահմուտ ուսուցչի «Անգիտաց Անպէտ... յորում պարագրեն քաղութաբ պէսպէս գեղեցկապաճոյն խրատական և հոգեզուարճ բանից ի զանազան երևելի անգղիացի մատենագրաց», 314 էջ¹⁴⁸. ապա Պ. Մ. Մկրտչյանի «Անաշտ բանը» գործը. «Խորադիմայ դժորդութեան, որ է կատակերգութիւն իմն ի չորս գործս բաժանեալն, աշխատասիրեալ ուրումն մատաղ բանաստեղծի», 100 էջ, և վերջապէս «Հրիտակ հօր ուրումն առ դատերս իր» բարոյագիտական գրվածքների մի ժողովածու, որն անգլերէնից հայերէնի է թարգմանում «մեծարգոյ աթօռակալ և անդամ գերապատիւ իմաստախընդրական միաբանութեան Մ. Յ. Աղանորեանց»¹⁴⁹:

1822 թվականին Կալկաթայում և Մարաշում գործում է շատ կարճ տևողությամբ

¹⁴² Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 92: Տե՛ս նաև «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցանկ, 1512—1800», Երևան, 1968, էջ 219:

¹⁴³ «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցանկ, 1512—1800», Երևան, 1968, էջ 221:

¹⁴⁴ Նույնը, էջ 223:

¹⁴⁵ Հայկ Դավթյան, նույնը, էջ 48—98:

¹⁴⁶ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 93:

¹⁴⁷ Նույնը, էջ 93:

¹⁴⁸ Հայկ Դավթյան, նույնը, էջ 98:

¹⁴⁹ Նույնը, էջ 99:

¹⁵⁰ Նույնը, էջ 98:

Օհանասիությունյան ընկերության տպարանը, ուր հրատարակվում են Արարամ Աստա-
նուր «Զեն ընդդէմ փորձութեան», էջ
պատու «Զեն ընդդէմ փորձութեան» անուն գրքույկը¹⁵¹ և
54, և «Ծաղկաւտան» անուն գրքույկը¹⁵² և
1823-ին էլ Հովհաննէս Ավդալյանի «Մշտիկ»,
որ է բանահիւտութիւն իմ» 56 էջանոց աշ-
խատությունը¹⁵³:

Բայց արդեն կալկաթախայերի սրտերի
մէջ լիարժեք էր տպագրության սերը: Մեկ
կողմէն անգղիական օրէ օր ավելի հառա-
ջադէմ տպարաններու և հրատարակությանց
օրինակին ազդեցությունը և մյուս կողմէ
հասարակության ծոցին մէջ մտավորական-
ներու և գրական դեմքերու բազմացումը
անհրաժեշտ կդարձնէին տպագրական գոր-
ծին ավելի հաստատուն ձև մը տալու պետ-
քը: Այդ պետքին բնականորեն կուգա գոհա-
ցում տալ ճեմարանը, որ իբրև կազմակերպ-
յալ կրթական հաստատություն, ուներ այդ
մասին կարևոր եղած ամեն դյուրությունը¹⁵⁴:
Մարդասիրական ճեմարանում տպարանի
բացումը կապվում է նրա առաջին ուսուցիչ-
ներից և ապա նրա տեսչի, թարգմանիչ ու
մատենագիր մեծավաստակ մանկավարժ
Հովհաննէս Ավդալյանի անվան հետ:

Մարդասիրական ճեմարանի տպարանը,
որը կրում էր նույն անունը, բացվում է
1822-ին, ուր և նույն տարին տպագրվում են
«Օրացոյց»-ը Կալկաթա տպարանի Մար-
դասիրական ճեմարանի»¹⁵⁴ և Հովհ. Ավդալ-
յանի «Համառօտ մեկնութիւն տրամաբանու-
թեան, որ ըստ Յունաց ասի Տիալիքտի-
կէս»¹⁵⁵: Սակայն «ըստ բանասիրական աղ-
բյուրների հեղինակը Պաղտատար Դպիրն
է»¹⁵⁶:

Մարդասիրական ճեմարանի տպարանը
գործում է շուրջ 50 տարի: Այդ տպարանից
լույս են ընծայվում, ի թիվս այլ հրատարա-
կությունների, նաև հետևյալ աշխատություն-
ները.

1. Հ. Յարութիւն վրդ. Ազգերեան, Բառա-
րան անգլերէն ու հայերէն, 1825, 289 էջ:

2. Ծառիքիբեկ-Շատրոբեկ. Ատա-
լա, օրհորդն սիրագոհ, 1826, 169 էջ (թարգ-
մանություն ֆրանսերէնից):

3. Չանգընեան Սամուէլ. Հոսսեղա արքա-
յորդին Եթովպիոյ, 1826 թ., 168 էջ (թարգ-
մանություն անգլերէնից):

4. Ծառ վանն աւագ շաքաթու, 1826, 16 էջ:

¹⁵¹ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 94:
Տե՛ս նաև Հայկ Դավթյան, նույնը, էջ 105:

¹⁵² Հայկ Դավթյան, նույնը, էջ 118:

¹⁵³ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 95:

¹⁵⁴ Հայկ Դավթյան, նույնը, էջ 106:

¹⁵⁵ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 95:

¹⁵⁶ Հայկ Դավթյան, նույնը, էջ 105:

5. Յաղագս հաստատութեան նպատակի և
արդեանց քրիստոնէութեան և յատկապէս
յաղագս վարդապետութեան փրկագործու-
թեան, 1828, 36 էջ:

6. Պորտուս Բիլքի, Բրիստոստոյց, 1828,
148 էջ (թարգմանություն անգլերէնից):

7. Պտղայից յորդորակ լընթեռնու և ի
գիտել զԱստուածաշունչ գիրս, 1828, 16 էջ:

8. Մեկնութիւն ահաւոր խորհրդոյ սրբոյ
պատարագի, արտահանեալ ի մեկնութեանց
Խոսրովու Անձնացեաց եպիսկոպոսի և Ներ-
սէսի Լամբրոնացոյ՝ վերատեսչին Տարսուհի՝
կարճելով և պարզաբանելով Յովհաննու
Արճիշեցոյ... 1830, 156 էջ:

9. Սան Պիո. Բեռնարդեն դը Պիեռ. Սան
Պիոռու Գաղղիացոյ նաւակծութիւն, կամ
«Պալոս և Վերգինիա», 1830, 191 էջ:

10. Սիրակարկաշ, որ է հանդիսարան հա-
լերէն, պարսկերէն և հինդաստանցերէն եր-
գոց, հաւաքեալ աշխատասիրութեամբ Ստե-
փաննոսի Զնթումեան Աւետեանց, 1830 թ.,
128 էջ. «Ծառ շահեկան է գրքույկին բո-
վանդակությունը, նախ հայերէն տաղերով,
որոնք աշտուղական գրականության գեղեցիկ
կտորներ են... բարոյաշունչ և երբեմն զը-
վարթամիտ ոտանավորներով... խաղերգե-
րով... որոնք կգործածվեն խրախմանական
պատեհություններով»¹⁵⁷. «Իր ժամանակի
տարածված երգերի ժողովածու, մեր օրերի
երգարանների առաջին նախատիպը»¹⁵⁸:

11. Հ. Միքայել Չամչեան, Բերականու-
թիւն հայկագեան լեզուի, 1830, 476 էջ:

12. Ներսէս Շնորհալի՝ Ողբ Եղեսիոյ.
Վահրամ վարդապետ՝ զպատմութիւն հայոց
ոտից չափամբ. Ներսէս Լամբրոնացի՝ Ներ-
բողեան առ սուրբն Ներսէս Շնորհալի,
1832, 216 էջ:

13. Կարգ թաղման կարգաւորաց, 1836,
261 էջ:

14. Մաշտոց... ըստ կարգաւորութեան
սրբոց հարցն մերոց, բաղդատութեամբ բա-
զում ընտիր օրինակաց, 1836, 404 էջ¹⁵⁹:

15. Դոռն քերականութեան ի պետս աշա-
կերտաց Մարդասիրական ճեմարանին,
1890, 50 էջ:

1827 թվականից Կալկաթայում գործում է
«Եպիսկոպոսական ճեմարանի անգղիաց-
ւոց» տպարանը՝ ղեկավարությամբ «ի Յա-
կոբայ Սալսեկեան», ուր մասնավորաբար
տպագրվում են այդ ճեմարանի նախկին
սան և ապա դասախոս ու հայ մեծ մատե-
նագիր Մեարոպ Թաղիադյանի գործերը, ո-
րոնց թվում «ճշմարտութիւն քրիստոնէական

¹⁵⁷ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 95:

¹⁵⁸ Հայկ Դավթյան, նույնը, էջ 174—175:

¹⁵⁹ Նույնը, էջ 148—250:

հաստոյ» (թարգմանություն լատիներենից)... Մետրով Դաթեան Թադիադեանց Կարբեցի, սարկաազ սրբոյ Էջմիածնի, 1829, 284 էջ, ապա «Պաղեստին» (թարգմանություն), 1830, 76 էջ, «Դիցաբանություն» (ինքնագիր), 1830, 131 էջ, «Մետրովեան այբբենարան», 1840, 60 էջ, «Մետրովեան շարադրիչ հայ և անգլիական լեզուաց», 1840, 70 էջ, «Պատմություն հին Հնդկաստանի», 1891, 236 էջ:

Կալկաթայում 1830-ական թվականներից գործել է Գևորգ Մկրտչոյ միսիոնարաց կամ «Մկրտչի միսիոներաց» տպարանը¹⁶⁰, ուր 1839 թվականին հրատարակվում է Նոր Կտակարան, «նորք տառերով, մաքուր տպագրությամբ, լուսանցքի համաբարբառ ցուցումներով, որ լեզվաբանական մեծ շահեկանություն ունի մասնավորաբար զուտ հնդկահայերենի կամ հին նոր շուղալերենի ուսման համար»¹⁶¹:

Ոչ անգլիական-եպիսկոպոսական ճեմարանի և ոչ Մկրտչոյ միսիոնարների տպարանները, որոնք գործում էին մասնավորաբար կրոնական պրոպագանդի համար, չէին կարող բավարարել կալկաթահայության հոգեվոր, կրթական, մշակութային հրատարակչական կարիքները: Այդ իսկ պատճառով Կալկաթայում կազմակերպվում է 1845 թվականին Արարատյան ընկերությունը, «նպատակ ունենալով հատկապես հայ լրագրի և գիրքերու տպագրությունը»¹⁶²: Սույն տպարանը գործում է մինչև 1852 թվականը:

Հայրենասիրական, հրատարակչական այս ձեռնարկի գլուխն է կանգնում անվանի մատենագիր և մանկավարժ Մետրոպոլիտանացի, «որ հակառակ կորով կցուցնե, թե՛ ընկերության կազմության գործին և թե՛ գիրքերու տպագրության ձեռնարկին և թե՛ Ազգասէր անուն լրագրին խմբագրության մեջ»¹⁶³:

Մետրոպոլիտանացի իր հնդկահայերի պատմության մեջ մի առանձին գլուխ է հատկացրել անհայտ հայրենասեր, մեծահմուտ մտավորական, բնիկ երևանցի, Մայր Աթոռի սարկավազ Մետրոպոլիտանացի կյանքին և մանկավարժական, մատենագրական, թարգմանչական շնորհակալ գործունեությանը: Թադիադեանցը ծնվել է 1803 թվականին, Երևանում, մահացել՝ 1858 թվականի հունիսի 10-ին, Նոր Զուղայում¹⁶⁴: Թադիադեանցի շնչի ներքո խորը հայրենասիրական դաստիարակություն են ստանում բազում

նորշուղայեցի տղաներ ու աղջիկներ: «Հընդկաստանում,—գրում է Մետրոպոլիտանացի, —Թադիադեանցի ջանքերին ենք պարտական հայոց լեզվի և դպրության և ազգասիրության վերագործոնը: Նա իր «Ազգասէր» թերթի միջոցով վերակենդանացրեց այս երկրում հայրենասիրության անթեղված կայծերը»¹⁶⁵:

Արարատյան ընկերության տպարանից լույս են տեսնում.

Օրբելյան Ստեփաննոս Սյունեցի, «Ողբք և հառաչանք ի դիմաց մօրս մերոյ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի», 1846, 48 էջ:

Մետրոպոլիտանացի հետևյալ գործերը՝ «Թութակ», «Նուագարան գրասանաց», 1847, 38 էջ. «Կարգ և կանոնք ս. Սանդուխտ դպրոցի օրհորդաց» և «Ծառ դաստիարակության օրհորդաց», 1847, 38 էջ, և «Համառոտ քերականություն», 1848, «Ծանապարհորդություն Մետրովբայ Դ. Թադիադեանց վ. Ա. սարկավազի սրբոյ Էջմիածնի ի Հայս», 1847, 382 էջ. «Ծանապարհորդություն ի Պարսկաստան», 1898, 143 էջ. «Մետրովեան առաջնորդ Մանկանց», 1847, «Սոս և Սոնդիպի», 245 էջ. «Վեպ վարսենական՝ սկայուհոյ Աղուանից. ապա. Աղամայան Պետրոսի՝ «Մեկնություն Յալունության և. Յովհաննու առաքելոյ, 1846, 350 էջ»¹⁶⁶:

Կալկաթայում 1846-ին գործում է Գևորգ Արծիւ անունով մի տպարան կ. պոլսեցի Պողոս Վիչենյանի գլխավորությամբ: Սույն տպարանը «թե՛ն արվեստի նրբության և տառերու ճոխության տեսակետով շատ ավելի կատարյալ էր քան բոլոր իր նախորդները... անհկա չի կրնար գտնել բուն գրագիտական արժեք ներկայացնող գործ տպագրության համար և կրավականաճա եկեղեցական և բարեպաշտական գիրքերու տպագրությամբ»¹⁶⁷, ինչպիսիք էին «Բուրվառ աղօթից»¹⁶⁸, «Աւետարան», 1847¹⁶⁹, «Ժամագիրք»¹⁷⁰:

1869 թվականին Կալկաթայի հայոց եկեղեցու վիճակավոր տ. Հովհաննես քեն. Խաչիկյանը կազմակերպում է վերջին տպարանը ս. Գրիգոր Լուսավորիչ անունով, ուր առավելապես հրատարակվում են իր երկասիրությունները, այդ թվում՝ «Հայելի փոքրիկ» (1869) բարոյախոսական մի տետրակ, «Երկնային հրաիրակ» և «Համառոտ քրիս-

¹⁶⁰ Նույնը, էջ 246:

¹⁶¹ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 98:

¹⁶² Նույնը, էջ 98:

¹⁶³ Նույնը, էջ 99:

¹⁶⁴ Մետրոպոլիտանացի, նույնը, էջ 513—522:

¹⁶⁵ Նույնը, էջ 521:

¹⁶⁶ Հայկ Դավթյան, նույնը, էջ 346—367:

¹⁶⁷ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 100:

¹⁶⁸ Հայկ Դավթյան, նույնը, էջ 344:

¹⁶⁹ Նույնը, էջ 354:

¹⁷⁰ Նույնը, էջ 367:

տոնէական» (1870), «Գաւազանագիր Լա-
խապատիւ եւ վերջապէս եպիսկոպոսաց
Նոր Զորայր Ամենաիրկիշ վանաց»
(1876):

1796 թվականին Մադրասում հրատարակ-
ված «Ազդարար»-ը՝ հայ լրագրության այդ
անդրանիկը, ունենում է իր հաջորդները
հնդկահայ համայնքի մշակութային կյանքի
պատմության մէջ:

Կալկաթայում 1820 թվականին, ճեմարա-
նի հիմնադրումից մի տարի առաջ, հրա-
տարակվում է Հայելի Կալկաթեան պարբե-
րաթերթը, որն ունեցել է հազիվ մի տարվա
գոյություն, ինչպէս նշում է Մեարույ Թա-
ղիադյանը իր «Ազդարար»-ի 1847 թվակա-
նի 102-րդ համարում: «Հայելի Կալկաթեան»
թերթի մէջ է հրատարակվել, ըստ նրա վկա-
յան, այլ արժեքավոր գրութեի հետ մաս
յովան, այլ արժեքավոր գրութեի հետ մաս
«Տէր, կեցո դու գհայս», ...կհասկցվի ուրեմն թե
գային մարթերգը, ...կհասկցվի ուրեմն թե
այս երգը հորինված չէ Մեարույ Թաղիադ-
յանց, ինչպէս կկարծվէր ընդհանրապէս,
քանի որ այս վերջինիս Հնդկաստան գալեն
տարիներ առաջ հրատարակված էր ան
Կալկաթայի այս հայաթերթին մէջ: Անոր
հեղինակն է անտարակոյս, սակայն հայրե-
նաներ ուրիշ հնդկահայ մը, որ անգլիական
«Տէր, կեցո զարբայն» երգին ներշնչումին
ներքև ոգած է մտածումի և ձևի տեսակետով
գերազանց մեր ազգային այս օրհներգը»¹⁷¹:

1821 թվականին, երբ դադարում է միամ-
յա «Հայելի Կալկաթեան»-ը, նրան հաջոր-
դում է Ծոռեմարան թերթի հրատարակու-
թյունը: Ըստ Մեարույ Սեթի վկայության,
Ծոռեմարանը մասն հրատարակվում է Բոմ-
բեյում, «Օհանասիսիտեան» ընկերության
ուսարանում և ապա փոխադրվում Կալկա-
թա՝ «Իմաստնախնդրական» ընկերության
փափագով: Սույն թերթերի խմբագիրն է ե-
ղել տիրացու Մարտիրոս Մկրտչյանը¹⁷²:

1822—1845 թվականներին Կալկաթայում,
որպէս հնդկահայության մշակութային
կենտրոնի, չի հրատարակվում ոչ մի մա-
մուլ: 1845 թվականին սկսվում է հրատարա-
կությունը Ազգասէր-ի, որպէս օրագիրն ու
օրգանը Արարատյան ընկերության: «Անու-
նը, նակատի խորհրդանշանական պատկե-
րը, որ միշտ Արարատ լեռը կներկայացնէ,
երբեմն հայկական զինանիշներու և դրոշմե-
րու շրջագծովը, կհայտնեն ինքնին թե այս
թերթին նպատակն էր աշխարհի հեռավոր
այս սահմանին վրա, օտարության ամենեւ
խոյ մեկ անկյունը ինկած այս հայազարդ-
թին մէջ կենդանի սպառել սերը իր ազգին, ա-

նոր ներկային ու անցյալին հետ հարաբերու-
թյան մէջ դնելով զինքը և այսպէս օգնել ա-
նոր ազգային ինքնապահպանության»¹⁷³:

«Ազգասէր»-ը լույս է ընծայվում Կալկա-
թայի հայրենասեր և ուսումնասէն ազգա-
յիններէ բաղկացած ընտրանի մը՝ նախա-
նկնությունը, «Մեարույ Թաղիադյանցի»
վստովուն քանաստեղծի և ուսուցչի՝ խմբա-
գրությամբ¹⁷⁴:

«Ազգասէր»-ի հրատարակությունը շարու-
նակվում է յոթ տարի, մինչև 1848 թվականի
հունիս: Երկու ամիս հետո, 1848 թվականի
սեպտեմբերին, վերահրատարակվում է Ազ-
գասէր Արարատեան անունով և շարունակ-
վում մինչև 1851 թվականի վերջը, մասն որ-
պէս «հանրապատում տասնօրագիր» և ապա
«կիսամասագիր», երբ Մեարույ Թաղիադ-
յանցը իր հիմնած ս. Սանդուխտ վարժարանն
ու «Ազգասէր»-ը փոխադրում է Չիկագոյա-
2իչրա քաղաքը, որը գտնվում է Կալկաթա-
յից շուրջ 50 կիլոմետր հեռավորության վրա:
Թերթի հրատարակությունը շարունակվում է
մինչև 1858 թվականի հուլիսը: «...Թաղիադ-
յանցը ոչ միայն ըմբռնած է պետքը և ճա-
շակը հասարակության՝ որուն համար կըր-
նէր... այլ կրցած է գաղութին ազգային
կյանքին վրա տիրական ազդեցություն մը
ունենալ: Ազգասէր-ը իր առավելություննե-
րով կմնա հավատարիմ ցոլացուցիչը հընդ-
կահայոց գեթ իր ժամանակի սերունդին
կյանքին և ձգտումներուն և ապահովաբար
ամենեւ ճոխ գանձարանը հնդկահայության
հիշատակներու և պատմության»¹⁷⁵:

Հնդկաստանի զանազան հայ համայնքնե-
րում գրի են առնվել նաև եկեղեցական,
աստվածաբանական, պատմական բովան-
դակությամբ ընտիր հայերեն ձեռագրեր
Կալկաթայում, Մադրասում, Սաիդաբադում,
Սուրատում, Լահորում և այլուր¹⁷⁶:

Հնդկահայ գաղութի պատմությունը մեր
ժողովրդի նորագույն պատմության կամ
«հայ ազգին վերջին դարերու պատմության
փառքը հանդիսացավ»¹⁷⁷: Այսօր չկա հընդ-
կահայ երբեմնի փառավոր գաղութը, իր եր-
բեմնի գործող երկնապաշտ եկեղեցիներով,
ազգային-մշակութային եռուն կյանքով, բա-
ցի Կալկաթայի փոքրաթիվ հայ համայնքից,
որի ծոցում, սակայն, վառ են հայ եկեղեցու
սերը, հայրենասիրության զգացմունքն ու

¹⁷¹ Նույնը, էջ 108:

¹⁷² Նույնը, էջ 105:

¹⁷³ Նույնը, էջ 108—104:

¹⁷⁴ «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատե-
նադարանի», հատոր Բ, Երևան, 1970, №№ 5571,
6882, 7040, 7560, 8111, 9040, 9299, 9571:

¹⁷⁷ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 359:

¹⁷¹ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 101:

¹⁷² Նույնը, էջ 102:

պաշտամունքը հայ մշակույթի և մեր հոգևոր արժեքների:

Ազգիս Վեհափառ Հայրապետը հնարավոր ամեն ինչ անում է՝ Կալկաթայում բարձր մակարդակի վրա պահելու համար եկեղեցական-կրթական կյանքը, հայրապետական պատվիրակների նշանակումով, կոնդակներով, եկեղեցական վարչության հետ թղթակցություններով:

Կալկաթայի հայությունը աչսօր արժանավոր ժառանգորդն է իր նախնիների ավանդությունների, հավատքի, էջմիածնասիրության և հայրենասիրության:

Թվով փոքր, բայց սրտով մեծ այս համայնքը հերոսական ու սրտագին ջանքեր է թափում՝ ապրելու համար ս. Էջմիածնի օրհնության ներքո վերածնված հայոց աշխարհի պայծառ իրականությամբ ու տեսչակալմով: Այսօր էլ դեռ վառ է համայնքի եկեղեցական, կրթական, մշակութային կյանքը իր բոլոր երեսների վրա՝ ի փառս հայ անվան:

Հնդկահայության պատմության և Կալկաթայի հայ համայնքի սրտում և հիշողության մեջ վառ է պահվում Հայոց Հայրապետի 1963 թվականի դեկտեմբերյան օրերին հայրապետական այցելության պատճառած ուրախությունն ու հոգեկան բերկրանքը, որպես ներշնչարան ազգային արժանապատվության և ամուր կովան հայապահպանման:

Հայրապետական կոնդակի հրահանգով հոկտեմբեր ամսում հոգեհանգստյան արարողություններ և հորեղանակալ հանդիսու-

թյուններ կկատարվեն ամեն տեղ Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի 150-ամյակի առիթով:

Հանուն Վեհափառ Հայրապետի Մայր Աթոռից դեկտեմբերին մասնավոր մի պատգամավորություն կմեկնի Կալկաթա, անձամբ տանելու Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները և մասնակցելու հանդիսություններին:

«Սրբո Հորն մերո Գրիգորի Լուսավորչի զահից և վերածնված Մայր Հայաստանից Մենք՝ կաթողիկոս Ամենայն Հայոց, ողջունում ենք և օրհնում հարյուր հիսուն տարիների պատմությունն ու վաստակը Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի, սրտաբուխ մաղթանքով, որ նաև մեր օրերում, նա շարունակի իր կրթական-մշակութային հայաշունչ առաքելությունը ի փառս հայ անվան», գրում է Հայոց Հայրապետը իր հորեղանակալ կոնդակում:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն իր բոլոր ընթերցողների, ջերմորեն շնորհավորում է Կալկաթայի հայ համայնքը, Մարդասիրական ճեմարանի տեսչությանը, դասախոսական կազմին և ուսանողությանը, մեծ հորեղանի առթիվ, սրտագին բարենախություններով, որ հեռավոր Գանգեսի ափերի վրա միշտ վառ մնան ջահը՝ Լուսավորչի հավատի, պաշտամունքը՝ հայոց լեզվի ու մշակույթի, ոգին՝ հայոց պատմության, շունչը՝ վերածնած հայոց աշխարհի:

